

ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՐՑԱԽԻ ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ՀԻՄՈՒՆՔՆԵՐ, ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ*

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Քանայի բառեր՝ Արցախ, տեղանուն, բնականուն, վերանվանում, տեղանվանական համակարգ, պատմական հիշողություն, վարչատարածքային փոփոխություն, լեզվական ստանդարտացում, ինքնություն, քարտեզագրություն:

Ամփոփում

Արցախի տեղանվանական համակարգում բնականունների վերանվանումը պատմական, լեզվական, մշակութային և քաղաքական գործոնների փոխազդեցությամբ ձևավորվող բազմաշերտ գործընթաց է: Անվանափոխության միջոցով վերաիմաստավորվում են բնականվան բովանդակությունը, պատմական կենսագրության ընկալումը և հանրային գիտակցության մեջ նրա ունեցած խորհրդանշական արժեքը:

Վերանվանումների հիմքում ընկած են վարչատարածքային վերաձևումները, հասարակատնտեսական հարաբերություններն ու դրանք արտացոլող գաղափարական փոփոխությունները, լեզվական շփումները, գրավոր արձանագրության և քարտեզագրության պահանջները: Տարբեր ժամանակներում թարգմանությունը, հնչյունափոխությունը, բառապատճենումը, վերաիմաստավորումը, տառադարձությունը, գրականացումը և ստանդարտացումը դարձել են բնականունների փոփոխության եղանակներ:

Դրնավարդ / Կարմիր գյուղ, Ստեփանակերտ, Շահումյան, Ամարաս, Խաչեն, Վարդաշատ, Կարմրակուճ, Պատարա, Առաքել, Գառնաքար, Մեհտիշեն / Լուսաձոր և այլ օրինակներ վկայում են, որ վերանվանումը հաճախ վերակողմորում է տարածքի պատմական հիշողությունը՝ երբեմն վերականգնելով, երբեմն էլ խզելով անվան և իրական պատմաաշխարհագրական միջավայրի կապը:

Այս գործընթացի հետևանքով առաջանում են հին և նոր անվանումների համատեղ գործածություն, քարտեզագրական ու փաստաթղթային տարասեռություն, տարածական կենսագրության տրոհում, ինչպես նաև ինքնության նոր խորհրդանշական շերտեր:

* Ներկայացվել է 27. V. 2026 թ., գրախոսվել է 01. VI. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

© Հեղինակներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

Արցախի բնականությունների փոփոխությունները տարբեր պատմաշրջանների քաղաքական, մշակութային և լեզվական իրողությունների լեզվական հետքերն են՝ տարածքի պատմական հիշողության և ինքնության վերակազմավորման կարևոր վկայությունը:

Նախաբան

Տեղանվան առաջնային գործառույթը տեղորոշիչ նշան լինելն է. տեղանունները հասցե են, քարտեզագրության լեզվի հիմնական միավորներ, որոնք կիրառվում են տարածքը նշելու, տարածքը բաժանելու, սահմաններ ու միավորներ հստակեցնելու համար: Մյուս կողմից՝ տեղանուններն իրենց տարածքի ու ժամանակի կնիքն ունեցող պատմական հիշողության ամփոփում-արձանագրություններ են, կենսագրության հուշարձանային շերտեր, որոնք ձևավորում են ընկալում և ինքնություն, դառնում պատմական մեկնությունների հավաստի փաստագրություններ: Տեղանունը, ըստ էության, «մեր տարածքի» և «մեր անցյալի» լեզվական կոդն է:

Յուրաքանչյուր տեղանուն, հատկապես բնականունը, կարող է տեղեկացնել՝ պատմաշախարհագրական ինչպիսի՝ իրողությունների, հասարակատնտեսական ինչ հարաբերությունների միջավայրում է ձևավորվել բնակավայրը, ինչ լեզվական շերտեր են ներգործել տվյալ տարածքում: Իսկ սա նշանակում է, որ տեղանվանական համակարգի փոփոխությունները, մասնավորապես վերանվանումները ունեն պատճառաբանվածություն:

Վերանվանումը սոսկ լեզվական թաղանթի «փոխարինում» չէ. այն կարող է փոխել օբյեկտի սոցիալ-մշակութային և քաղաքական նշանակությունը, վերաշարադրել հիշողության շերտերը, երբեմն էլ խզել անվան և պատմական իրականության կապը: Վերանվանման գործընթացն ակտիվանում է, երբ փոխվում են իշխանական համակարգերը, վարչատարածքային կառույցները կամ գաղափարական օրակարգերը: Այդ դեպքում անվանակոչումը ներառում է ոչ միայն լեզվական գործողություն (ինչյունափոխություն, կիսապատճենում, թարգմանություն, փոխառություն, հայերենացում), այլև նպատակային խորհրդանշական քաղաքականություն՝ կապված տարածքային պատկանելության, իրավական վերահսկողության և մշակութային գերակայության հաստատման հետ:

Արցախի բնականությունների վերանվանումների ուսումնասիրությունը հատկապես կարևոր է, քանի որ տարածքի պատմական գոյության ու զարգացման ընթացքը շարունակաբար ուղեկցվել է վարչատարածքային վերաձևումներով՝ պատմական գավառներից ու մելիքություններից մինչև կայսերական, խորհրդային և անկախության շրջանի վարչական համակարգեր: Յուրաքանչյուր փուլ ձևավորել է իր անվանացանկը՝ կա՛մ պահպանելով ավանդական շերտը, կա՛մ ստեղծելով նոր անվանումների շերտ: Վարչաքաղաքական այս վերափոխումները հաճախ ուղեկցվել են տեղանունների խմբագրմամբ՝ բնակավայրերի, գոտիների ու շրջանների, կենտրոնների փոփոխությամբ, ինչպես նաև սահմանների փոփոխությամբ, որը տեղանվանական համակարգը դարձրել է բարդ ու բազմաշերտ:

Տեղանուններն իրականում պահպանում են տարածքի «կենսագրությունը», իսկ վերանվանումը փոխում է այդ կենսագրության ընթերցումը, և Արցախի օրինակով մեզ տեսանելի են դառնում այդ գործընթացի մեխանիզմները:

Վերանվանման գործընթացի քննությունը կատարվում է վերլուծական քառաստիճան շրջանակի հիման վրա՝ տարբերակելով՝ հիմունքային մակարդակը (լեզվաբանական, մշակութային, քաղաքական), անվանափոխության եղանակները՝ որպես գործիքակազմ (թարգմանություն, հնչյունափոխություն, բառապատճենում, վերափմաստավորում, տառադարձություն, ստանդարտացում և այլն), պատճառահետևանքային շղթայում վեր են հանվում պատճառները՝ որպես շարժառիթներ (իշխանափոխություն, վարչատարածքային վերաձևում, գաղափարախոսական գործոններ, քարտեզագրական հաշվառման պրակտիկաներ և այլն) և գործընթացի հետևանքները՝ որպես ազդեցություններ տեղանունների իմաստային բովանդակության, պատմական շարունակականության ու ինքնության ընկալման վրա (հիշողության խզում, ինքնության վերակողովորում, քարտեզագրության խնդիրներ և այլն):

Վերանվանման հիմունքները

Արցախի բնականոնների վերանվանումները պայմանավորված են մի շարք փոխկապակցված գործոններով, որոնց առանցքում օբյեկտի նկատմամբ ձևավորվող ընկալման փոփոխությունն է: Վերանվանման առաջին և առավել տեսանելի հիմունքը լեզվաբանական բնույթ ունի. անվան փոփոխությունը հաճախ իրականացվում է թարգմանության, հնչյունափոխության, գրային փոփոխությունների, ինչպես նաև բառակազմական վերաձևումների միջոցով: Այդ գործընթացների նպատակն է տեղանունը հարմարեցնել տվյալ ժամանակաշրջանի լեզվական նորմերին կամ վարչական-պաշտոնական գործածությանը՝ երբեմն պահպանելով նախնական իմաստային հենքը, երբեմն էլ ամբողջությամբ վերափոխելով այն: Լեզվաբանական այս միջամտությունները, սակայն, ինքնանպատակ չեն. դրանք հաճախ հանդես են գալիս որպես ավելի խորքային՝ մշակութային կամ քաղաքական գործընթացների գործիք:

Մշակութային հիմունքը դրսևորվում է այն դեպքերում, երբ վերանվանումը նպատակ ունի ձևավորելու նոր ինքնություն կամ վերափմաստավորելու գոյություն ունեցող խորհրդանիշները: Նման դեպքերում բնականունը դադարում է զուտ աշխարհագրական նկարագրություն լինելուց և վերածվում է գաղափարական կամ հուշարձանային անվան, որի միջոցով վերաշարադրվում է տարածքի պատմական ընկալումը: Այս գործընթացը կարող է ունենալ ինչպես դրական արդյունք՝ պատմական անվանումների վերականգնման և հիշողության պահպանման տեսանկյունից, այնպես էլ բացասական հետևանքներ, երբ դիպվածային կամ գեղարվեստական բնույթի անվանումները խզում են տեղանվան և պատմաաշխարհագրական իրական միջավայրի կապը:

Քաղաքական հիմունքը վերանվանումների ամենաակտիվ գործոններից է և առավել հստակ դրսևորվում է վարչատարածքային վերաձևումների ու գաղափարախոսական շրջադարձների ժամանակ: Արցախի պատմության ընթացքում վարչական համակարգերի փոփոխություններն ուղեկցվել են տեղանվանական համակարգի խմբագրմամբ՝ բնակավայրերի, շրջանների և տարածքային միա-

վորների անվանափոխությամբ, որոնք արտացոլել են տվյալ իշխանության քաղաքական օրակարգը և տարածքային վերահսկողության հաստատման ճգնաժամը: Այս համատեքստում վերանվանումը հանդես է գալիս ոչ միայն որպես լեզվական գործողություն, այլև որպես տարածքի խորհրդանշական վերասահմանման միջոց:

Այսպիսով՝ բնականումների վերանվանման հիմունքը միշտ կապված է օբյեկտի ընկալման փոփոխության հետ. փոխվում է ոչ միայն անվանումը, այլև այն պատկերացումը, որ հասարակությունն ունի տվյալ վայրի մասին: Վերանվանումը վերակողմնորոշում է տարածքի իմաստային դաշտը՝ ազդելով պատմական հիշողության, մշակութային ինքնության և տարածքային պատկանելության գիտակցության վրա, որի հետևանքով բնականումը դառնում է ոչ միայն քարտեզագրական միավոր, այլև ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական իրողությունների լեզվական վկայություն:

Վերանվանման պարճառները

Արցախի բնականումների վերանվանումների գործընթացը բազմաշերտ է և պայմանավորված է թե՛ լեզվական, թե՛ սոցիալ-մշակութային և թե՛ քաղաքական գործոններով: Վերանվանման տարբեր ձևերը ցույց են տալիս, որ անվան փոփոխությունը երբեք պատահական գործողություն չէ, այլ կապված է տարածքի նկատմամբ ձևավորվող նոր վերաբերմունքի և ընկալման հետ: Արցախի բնականումների վերանվանումների պատճառները պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի հիմնական խմբերի:

1. *Քաղաքական նոր կարգի և վարչական համակարգի հաստատում, մեխանիզմը՝ անվանափոխություն, վարչապարածքային տրոհում և ընտրովի շեշտադրում, հեղինակություն՝ տարածական ինքնության վերականգնում:*

Որոշ դեպքերում վերանվանումը հանգեցնում է նրան, որ անունն այլևս չի արտացոլում տվյալ օբյեկտի պատմական կամ աշխարհագրական իրականությունը, այլ ստեղծում է գաղափարական կամ խորհրդանշական նոր ինքնություն: Այսպիսի անվանումները նպատակ ունեն ընդգծելու քաղաքական նոր դիրքավորումը, վարչական նոր կարգավիճակը կամ մշակութային նոր ուղենիշները: Տարածական ինքնության փոփոխությունը կարող է արտահայտվել տարբեր եղանակներով՝ վարչատարածքային տրոհումներով, անվանափոխությամբ, վերանվանափոխումով և այլն:

Այսպես՝ V դարի մատենագրության մեջ նշվող Արցախի 12 նահանգներից Մյուս Հաբանդը տարածաշրջանի վարչատարածքային բաժանումների հետևանքով տրոհվեց 2՝ Դիզակի և Վարանդայի մելիքությունների, խորհրդային տարիներին Վարանդայի մի մասը ընդգրկվեց նոր վարչական միավորի՝ Մարտունու, մի մասը՝ Շուշիի, ապա՝ Ստեփանակերտի, այնուհետև՝ Ասկերանի շրջանների, իսկ Դիզակի մեջ մտնող բնակավայրերի մեծ մասն ընդգրկվեց նոր ձևավորված Հաղբուփի, մի մասն էլ՝ Մարտունու շրջանների մեջ: Ստացվում է, որ Մյուս Հաբանդի բնակավայրերը ցաքուցիք են Վարանդայի, Դիզակի, սրանք էլ իրենց հերթին՝ Մարտունու, Հաղբուփի, Ասկերանի շրջաններում: Ինչի՞նչ է սա հանգեցնում. կտրտված, ապակողմնորոշող տարածական կենսագրության. բնակավայ-

րի պատմության հետագիծը խճճվում է, սերունդների հիշողության կապերը թուլանում են: Օրինակ՝ Դրնավարզը Մյուս Հաբանդի տարածքում էր, ապա՝ Վարանդայի մելիքության, մի կարճ ժամանակահատվածում դարձավ Շուշիի շրջանին պատկանող, այնուհետև՝ Ստեփանակերտի, իսկ հետո՝ Ասկերանի շրջանի: Երբ մարդը հետահայացքով փորձի իմանալ իր բնակավայրի կենսագրությունը, ապա այդ կապերը և պատմական զարգացման ընթացքը բացահայտելը դառնում են գրեթե անհնարին՝ առանց գիտական խորքային ուսումնասիրության ու պատմական դրվագների վերհանման: Սա մեկի օրինակով: Ու եթե դեռ այս ամենին հավելենք կոնկրետ բնակավայրի անվանափոխությունը, որը գրեթե բոլոր բնակավայրերին է վերաբերում, ապա Արցախի տարածքի քարտեզագրության խնդիրները լիարժեք տեսանելի կդառնան: Նույն այդ Դրնավարզը 1917 թ. արխիվային փաստաթղթում զուգահեռ ունի երկրորդային Քեշիշքենդ¹ անուն, իսկ արդեն խորհրդային տարիներին այն վերանվանվել է Կարմիր գյուղ: Գրեթե բոլոր հին բնակավայրերն այս ողիսականն ունեն: Ըստ էության, նոր անվանակոչումները հնի կապերը ոչ թե միավորող են, այլ տրոհող, ընդ որում՝ մեծ մասամբ նպատակային, տվյալ ժամանակաշրջանի շահերը սպասավորող: Մարդը, ով ապրում էր Ասկերանի շրջանի Կարմիր գյուղում, իր բնականվան կենսագրությունը կապում էր խորհրդային համակարգի իրողություններին, մինչդեռ Դրնավարզում ապրողը Մյուս Հաբանդի և Արցախի պատմական ժառանգության կրողն էր: Ահա այսպես անվանափոխությամբ տեղի է ունենում տարածական կենսագրության փոխակերպում, որը օբյեկտը դուրս է բերում պատմական իրականությունից և դնում խորհրդանշական նոր շրջանակի մեջ:

Քննենք Ստեփանակերտի կենսագրությունը. այն Վարարակն, Ներքին շեն, Սողոմոնի շեն, Կարկաժան, Խանքեանդ, Փախլուր բնակավայրերի միավորմամբ² ստեղծված բնակավայր է:

1860–70-ական թվականներին Ղարաբաղի կենտրոնը Վարանդա գավառի Շուշին էր՝ 3000 ընտանիք՝ 21131 բնակչով: Խաչենի գավառում նշվող առանձին գյուղեր էին Կարկաժանը /Կիրկիժանը/՝ 80 տուն՝ 580 բնակչով, Ղայբալի/ Ղայբալիքենդը՝ 79 տուն՝ 448 բնակչով, Խանքեանդը՝ 50 տուն՝ 619 բնակչով, Փախլուրը՝ 18 տուն՝ 45 բնակչով³, մեկ այլ՝ 1841 թ. փաստաթղթում Վարարակնը՝ 31 տուն՝ 133 շունչ բնակչով⁴:

Այն, որ նշած գյուղերը հայկական ու հայաբնակ էին, վկայում է այդ գյուղերի ծխական քահանաների ձեռնադրության փաստը: Ահա քաղվածքը արխիվային փաստաթղթից. «Ծառայութեանց ցուցակ, տրված է 1910 թ., բայց ընդգրկում է 1870-ական թթ.-ից Շուշիի եկեղեցիներում սպասավորած անձանց անձնական գործերը:

Շուշիի գավառի Ղայբալի գյուղի ծխական Վրթանես քահանայ Յարութինյան Տեր-Ղուկասյանց. 1878 թ. ձեռնադրվել է քահանա:

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ). ֆ. 150, ց. 1, գ. 59:

² Բ ա լ ա յ ա ն. 2020, 12:

³ ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59:

⁴ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 47:

Շուշիի գավառի Կարկաժան գյուղի ծխական Իգնատիոս քահանայ Տէր-Գրիգորյանց. 1907 թ. ձեռնադրվել է քահանա:

Շուշու գավառի Խանքիանդ ավանի ծխական Պետրոս քահանայ տէր Հովհաննիսյանց (46 տարեկան). 1890 թ. ձեռնադրվել է քահանա»⁵:

ԼՂԻՄ վարչատարածքային միավորը ձևավորելուց հետո (1921 թ.), Շուշիի փոխարեն մարզի կենտրոնատեղի ընտրվեց այդ գյուղերի միավորմամբ խոշորացված նոր համայնքը, և այն անվակոչվեց ի պատիվ պետական, քաղաքական, կուսակցական գործիչ Ստեփան Շահումյանի՝ Ստեփանակերտ (1923 թ.)⁶: Հատկանշելի է այն, որ թեպետ Խանքենդը բնավ էլ ամենախոշորը չէր այդ բնակավայրերից, բայց և այնպես իբրև գործող ղեկավարության ընդունելի երկրորդային անուն Խանքենդն առժամանակ ընտրվեց (մինչ Ստեփանակերտ վերանվանվելը) և իրավական վավերացում ստացավ:

Իրականում անվանակոչության գործընթացում տեղի է ունեցել պատմական շերտերի ընտրովի շեշտադրում: Այն, որ Խանքենդն էր ընդգծվում (այսօր արդեն իբրև «պատմական անուն» վերականգնվում), վկայում է այն մասին, որ բոլոր ժամանակներում տարածքին իշխողների նպատակը ոչ թե պատմական իրողության արտացոլումն էր, այլ քաղաքական այն միավորի ստեղծումը, որը պետք է խզեր կապը բնիկ հայկական անվանումների հետ: Խանքենդը որպես բնակավայր ձևավորվել է Շուշվա խանի ձմեռանոցից և հետագայում խանապատկան դարձրած Վարարակն բնակավայրից՝ Խանէն բաղ՝ Խանի այգի: Խանքենդ նշանակում էր խանապատկան, և բնավ կապ չունի օտարացել խաների բնակության վայր լինելու կամ նրանց կողմից հիմնադրված լինելու անհիմն պնդման հետ⁷: Հայկ Խաչատրյանը նշում է, որ Վարարակնը խանի դաստակերտն էր, հայկազուն մելիք Բաղդ խանին էր պատկանում: Իսկ Խանքենդ անունը տրվել է ռուսների կողմից ոչ պաշտոնական անվանակոչությամբ, այլ խանի դաստակերտ անվան թարգմանությամբ⁸: 1830-ական թվականներին զորանոց բնակավայր է հիմնվում, և այդ զորանոց ավանի հիմնադրումն ու Վարարակնի ամայացումը, ինչպես նշում է Վ. Բալայանը, ժամանակագրորեն հաջորդում են միմյանց⁹:

Ստեփանակերտի ձևավորման պատմությունը տեղանունների միջոցով օբյեկտի վերակերտման դասական օրինակ է: Մի քանի հնագույն հայկական բնակավայրերի (Վարարակն, Փահլուր և այլն) հիմքի վրա նոր վարչական միավորի ստեղծումը և «Խանքենդ» անվան կանխամտածված շեշտադրումը ոչ այլ ինչ են, քան տարածական կենսագրության խմբագրում: Սա նպատակ ուներ բազմաշերտ հայկական պատմական իրականությունը փոխարինել պարզեցված, քաղաքականապես ձեռնտու կադապրով՝ ստեղծելով օբյեկտի նոր, օտարված ինքնություն:

Այսպիսով՝ անվանական տրոհումը (Դրնավարգ), քաղաքականացված վերակերտումը (Ստեփանակերտ) հանդես են գալիս որպես տարածական կենսագրության վերաշարադրման հետևողական գործիքներ, որոնք նպատակ ունեն

⁵ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 492:

⁶ Ուլուբաբյան. 1994, 251:

⁷ Բալայան. 2020, 13:

⁸ «Գրական թերթ», 02. IX. 1988:

⁹ Բալայան. 2020, 15:

աստիճանաբար խզելու տարածքի բնիկ պատմական հիշողությունը և այն փոխարինելու ժամանակաշրջանի քաղաքական օրակարգին ծառայող նոր ինքնությամբ: Այս ամենը փաստում է, որ տեղանունը ոչ թե լոկ լեզվական պիտակ է, այլ օբյեկտի պատմական ինքնությունը կերտող և պահպանող հիմնարար գործիք:

2. Պատմական օրինականության յուրացում. անվանափոխության եղանակը՝ բառապատճենում. հայրենի անունների կրկնություն նոր բնակավայրերում:

Վերանվանման գործընթացում բառապատճենումը (երբ նորաստեղծ կամ վերաբնակեցված բնակավայրերը անվանվում են արդեն հայտնի կամ պատմականորեն արժևորվող տեղանուններով) հանդես է գալիս որպես միջոց, որի հիմնական շարժառիթներից մեկը պատմական օրինականության յուրացումն է կամ մշակութային շարունակականության արհեստական պատրանքի ստեղծումը: Այս գործընթացը մի կողմից՝ ապահովում է անվան ճանաչելիությունը և մշակութային շարունակականության պատրանքը, մյուս կողմից՝ կարող է հանգեցնել տեղանվանական նույնանունության և պատմաաշխարհագրական անճշտությունների, երբ անվան տարածական ու պատմական կապը դառնում է պայմանական:

Այսպես՝ Շահումյանի շրջան էր անվանվել նախկին Գյուլիստանի մելիքությունը (ընդ որում ոչ ամբողջապես էր ընդգրկում Գյուլիստանի մելիքությունը)¹⁰՝ ի պատիվ Ստեփան Շահումյանի, իսկ երբ Արցախյան առաջին պատերազմում Շահումյանի շրջանը բռնազավթվեց, ազատագրված Քարվաճառի շրջանը վերանվանվեց Շահումյանի շրջան¹⁰: Եվ այդ նոր Շահումյանի շրջանում վերստին ստեղծվեցին բնակավայրեր՝ բռնազավթված բնակավայրերի անուններով՝ Նոր Վերինշեն, Նոր Բրաջուր, Նոր Էրեբե, Նոր Մանաշիդ, Նոր Խարխափուտ, Նոր Կարաչինար և այլն:

Ըստ էության, Շահումյան անվան նույնությունը տարածքային «տեղախախտում» է և քողարկում է երկու տարբեր պատմական հիմք ունեցող միավորների գոյությունը: Խորհրդային շրջանում ձևավորված Շահումյանը տեղանուն էր, որը քաղաքական-գաղափարական նպատակով դարձել էր Գյուլիստանի մելիքության փոխարինող անուն: Իսկ պատերազմի հետևանքով ստեղծված նոր Շահումյանն այլ տարածքի վրա տեղափոխված նույն անունն է. այն ոչ թե պատմաաշխարհագրական նույն միավորի շարունակություն է, այլ անվան «տեղափոխություն»՝ կորցրած Շահումյանի հիշողությունը, իրավական-նշանակային կապը նոր տարածքում վերարտադրելու համար: Նույն անունն ունենալով՝ հին շահումյանցին կապված էր իր «Շահումյան» կոչվող տարածքի պատմական-աշխարհագրական իրականության հետ, մինչդեռ նոր շահումյանցին նույն անունով ապրել է արդեն պայմանականացված կապի մեջ մի տարածքում, որի «Շահումյան» լինելը բխում է ոչ թե տեղի պատմությունից, այլ վերանվանման քաղաքական տրամաբանությունից: Իսկ «նոր» բաղադրիչով բնականությունների շարքը (Նոր Վերինշեն, Նոր Բրաջուր և այլն) հենց այդ տարբերության լեզվական նշանն է՝ ցույց տալով, որ շարունակականությունը ստեղծվում է անվան կրկնությամբ, ոչ թե նույն տարածքի պատմական անընդհատությամբ:

¹⁰ ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին օրենք. 1998, հունիսի 26, ՀՕ-15 (2011 ապրիլի 1-ՀՕ-10-Ն օրենքի լրացումներով ու փոփոխություններով):

3. Օբյեկտի կարգավիճակի և գործառույթի փոփոխություն (վարչատարածքային/պատմաքաղաքական շարժառիթ), մեխանիզմը՝ վերափոխման արդյունքում նշանակության փոփոխություն առանց ձևի փոփոխության:

Որոշ դեպքերում վերանվանումն իրականացվում է անվան վերափոխման փոխարեն: Նույն անվանումը տարբեր ժամանակաշրջաններում կարող է ընկալվել այլ կերպ՝ կապված պատմական, քաղաքական կամ մշակութային նոր իրողությունների հետ: Այս դեպքում փոփոխությունը լեզվական չէ, այլ գաղափարական, սակայն այն նույնքան ուժեղ ազդեցություն ունի օբյեկտի ընկալման վրա:

Ինչպես՝ Ամարաս¹¹-ը Մյուս Հաբանդի կենտրոնատեղին էր¹², ավան էր: Առաջին անգամ հիշատակվում է Խորենացու Պատմության մեջ. «Իսկ ի հասանել համբալոյ վախճանին Տրդատայ, ի դաւելոյ նորին Անատրկոյ և այլոց ոմանց հանապազաստ արանց Աղուանից՝ սպանին երանելին, ընթադրեալ ձիովք բարբարոսն ի Վատնեան դաշտին, մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով: Զոր բարձեալ սարկաագաց նորին, բերելով ի փոքր Սինիս, թաղեցին յԱմարաս աւանի»¹³:

Բուզանդի մոտ ևս կա գյուղի անվան հիշատակումը. «Եւ ապա բարձին գնա որք ընդ երթեալ էին գաւառէն Հաբաղեալ, եւ բերին ի գաւառն իւրեանց եւ կողմանս Աղուանից, ի սահմանս Հայոց ի Հաբանդի ի գետն, որ անուանեալ կոչի Ամարագ»¹⁴: Այն հետագայում՝ վարչատարածքային փոփոխությունների հետևանքով դարձավ Վարանդայի գավառի տարածք, ապա և՛ Խորհրդային տարիներին՝ Մարտունու շրջանի:

Հայ մատենագրության մեջ Ամարասը իբրև ավան, բնակավայր էր նշվում և մինչև 1917 թ. որպես բնակավայր դեռևս առկա էր փաստաթղթերում¹⁵: Հաջորդիվ այն իբրև բնակավայր դադարում է գոյություն ունենալուց, և Ամարաս անունն արդեն միայն վանքանուն է ճանաչելի մնում: Խորհրդային տարիներին վանքը գործունե չէր, իսկ տարածքը ծառայում էր շրջակա գյուղական համայնքներին՝ տնտեսական նպատակներով: Անկախության տարիներին վանքը նորից կենդանություն է ստանում, իսկ Ամարաս անվանումը նոր սերնդի գիտակցության մեջ հաստատվում է արդեն բացառապես որպես վանքի անուն՝ առանց նախկին

¹¹ Անվան ստուգաբանությունը Վ. Խաչատրյանը բխեցնում է հայերենի հնդեվրոպական ամառ արմատի ամար տարբերակից և ազագել՝ չորանալ կրկնավոր բայի ազ՝ չոր բաղադրիչից ու նշանակում է չոր ամառ: Տվյալ ամար արմատը նա գուցա հեռու է Վանի շրջանի Ամարա / սյրան, Մուշի Ամար / աճ (մասնիկով), Ալաշկերտի Ամար / ա (աճանց) հին բնակավայրերի անվանումներին (տե՛ս Խաչատրյան. 2015, 18): Իսկ Հ. Բեգլարյանը այն կապում է աստվածահայր Արամազդի անվան հետ՝ նշելով, որ պատմական Արցախի տարածքում պահպանվել են հայոց պանթեոնի բոլոր 8 աստվածների անուններով վայրեր՝ գավառներ, սրբավայրեր, աղբյուրներ, սարեր, և ուրեմն Արամազդ-Ամարաս նույնացումն ունի իրական հիմքեր (տե՛ս Բեգլարյան. 2005, 42):

¹² Ուլուբայան. 1975, 31:

¹³ Խորենացի. 1913, 260:

¹⁴ Փալեստոս Բիզանդացույ. 1912, 23–24:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 492:

բնակավայրային ինքնության հստակ գիտակցման: Ամարասի օրինակը փաստում է տեղանվան իմաստային նեղացման գործընթացը, որի հետևանքով օբյեկտը կորցնում է իր նախնական պատմական ինքնությունը (բնակավայր/կենտրոն) և ստանում նոր, սահմանափակված կարգավիճակ (վանք): Սա հանգեցնում է «տարածական անհիշության», անունը գրկվում է իր կենսագրության մի կարևոր շերտից ու դառնում է հուշարձան: Ամարասի օրինակը ցույց է տալիս, թե ինչպես կարող է անվան կայունությունը (անունը չի փոխվել) քողարկել օբյեկտի բովանդակային կորուստը:

Այդ երևույթի մեկ այլ օրինակ է Արցախի տեղանվանահամակարգում Խաչեն անվան պատմությունը: Այսպես՝ Բ. Ուլուբաբյանը նշում է, որ Խաչեն անունով դարեր շարունակ կոչվել է Արցախ նահանգի նախալեռնային ու լեռնային տարածքը: Արցախի 12 գավառներից Խաչենի իշխանության տակ էին Մյուս Հաբանդի մեծագույն մասը, Մեծառանքը, Մեծկվենքը, Փառիստը, Բերդաձորը, Ծարը (նախկին Վայկունիք) և առանձին գավառամասեր Ուտիքից ու մեծ Սյունիքից¹⁶: Արցախը X դարում կոչվել է Խաչենք. «Խաչենը գահերեց իշխանների նստավայրն էր, ուստի և նրա անունով էին կոչվում ամբողջ նահանգն ու իշխանությունը»¹⁷:

Խաչեն անունը նույնական էր Խաչին, Խաչենաձորի գավառ, Խաչենո աշխարհի, Խաչենո գավառ, Խաչենք, Խաչիան, Խաչին, Խաչին, Միջնարցախ անուններին, ինչը նույնպես վկայում է անվան գործառնության շարժունության մասին: Այն գավառ էր Մեծ Հայքի Արցախ աշխարհում: Առանձին ժամանակներում Խաչեն է կոչվել ամբողջ Արցախ աշխարհը (IX–XIII դդ.): Ըստ այդմ՝ Խաչեն կոչել են նաև Փոքր Սյունիք: Համարելով Արցախի միջնամասը՝ անվանել են նաև Միջնարցախ: XII դարի կեսին Խաչենի տարածքը բաժանված էր երեք իշխանությունների՝ Ներքին Խաչեն կամ Ծար, Վերին Խաչեն (Խոխանաբերդ), Կենտրոնական: Սրանցից Կենտրոնականը՝ Խաչենը կամ Հաթերքը, ընդգրկում էր նախկին Մեծկվանքի մեծ մասը, Փառիսոս և Կողթ գավառները¹⁸:

Բ. Ուլուբաբյանը նաև նշում է, որ չի կարելի ասել, թե Խաչեն անունով միջնադարում կոչվել է մեկ միասնական տարածք՝ իր անփոփոխ սահմաններով¹⁹: Ուշ միջնադարում Խաչեն անվան տակ հասկացվել է Խաչենի մելիքությունը, «որն ընդգրկում էր Խաչենագետից մինչև Կարկառ»²⁰:

Խաչեն անունով գյուղ է նշվում Ելիզավետպոլի նահանգի Շուշիի գավառում: Ենթադրվում է, որ գյուղը գտնվել էր Խաչեն գետի ափին²¹:

Իսկ անկախության շրջանի Խաչենը Սեյդիշեն բնակավայրի (Սեյդիշեն բնակավայրն անվանակոչվել էր Հասան Զալալ իշխանի տոհմի շառավիղներից Սեյտի բեկի անվամբ²², որը 1917 թ. փաստաթղթում իբրև երկրորդային անուն ունի

¹⁶ Ուլուբաբյան. 1975, 31:

¹⁷ Ուլուբաբյան. 1994, 55:

¹⁸ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. 1986, հ. 2, 665:

¹⁹ Ուլուբաբյան. 1994, 55:

²⁰ Ուլուբաբյան. 1994, 133:

²¹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. 1986, հ. 2, 665:

²² Ուլուբաբյան. 1975, 351–354, Սարգսյան. 1996, 67:

Սեյդիբեկլու օտար՝ կիսաթարգմանած հնչատարբերակը²³) վերանվանումն էր (26. VI. 1998)²⁴:

Այսպիսով՝ «Խաչեն» անվանումը տարբեր դարերում ունեցել է տարբեր տարածքային ընդգրկում ու քաղաքական նշանակություն. երբեմն՝ ամբողջ Արցախ աշխարհը (IX–XIII դդ.), երբեմն՝ առանձին գավառ, երբեմն՝ մելիքություն, ավելի ուշ՝ գյուղի անվանում, անկախության շրջանում՝ վերանվանված բնակավայր:

Թե՛ Ամարասի և թե՛ Խաչենի օրինակները հաստատում են վերաիմաստավորման օրինաչափությունը. անվան ձևը կարող է պահպանվել, սակայն ժամանակի ընթացքում փոխվում է դրա բովանդակությունը՝ կապված օբյեկտի կարգավիճակի, տարածքային ընդգրկման և վարչաքաղաքական իրականությունների փոփոխության հետ: Ամարասի դեպքում դիտարկվում է իմաստային նեղացում՝ բնակավայրից դեպի վանքանուն, իսկ Խաչենի դեպքում՝ իմաստային վերաճնավորում և ընդգրկման փոփոխություն՝ նույն անվան կիրառում տարբեր պատմական-քաղաքական միավորների համար: Անունը նույնն է, բայց օբյեկտը փոխել է իր պատմական «բովանդակությունը»:

4. *Լեզվական անկանոն զարգացում և գրավոր արձանագրության սխալներ, անվանափոխության եղանակը՝ հնչյունական աղավաղում, բանավոր փոխանցում, սխալ տառադարձություն և հետագա գրականացում:*

Վերանվանումների մի մասն առաջանում է ոչ համակարգված գործընթացների հետևանքով՝ բանավոր գործածության, հնչյունական աղավաղումների, գրավոր արձանագրության սխալների կամ բարբառային արտասանության ազդեցության հետևանքով: Այսպիսի փոփոխությունները հաճախ չունեն հստակ քաղաքական կամ մշակութային նպատակադրում, սակայն ժամանակի ընթացքում կարող են պաշտոնական-իրավական վավերացում ստանալ և ամրագրվել՝ դառնալով տեղանվանական համակարգի մաս:

Այսպես՝ Հադրութի շրջանի հին բնակավայրերից է Վարդաշատը: Գյուղի հին անունը նշվում է Որթնաշատ²⁵. 1860-ական թվականների փաստաթղթում այն չունի երկրորդային անուն, իսկ 1917 թ. փաստաթղթում վկայված է Որթնաշատ (Вордншат)²⁶, իբրև երկրորդային անուն էդիշա օտարահունչ ձևն է նշված: Բայց նրա ծագման հետ կապված շրջանառվող վարկածները միանշանակ չեն, քանի որ պատմական-աշխարհագրական տվյալները տարակարծությունների հիմք են տալիս: Անվանումը կարող է կապվել խաղողի որթի առատության փաստին. պատմական աղբյուրում կա այսպիսի արձանագրություն. «Այստեղ (Հադրութում) հիմնականում խաղողագիններ են, սակավ են թթայգինները»²⁷: Նույն աղբյուրում մեկ այլ տեղեկությամբ այլ վարկածի հիմք է տալիս՝ որդից առաջացած լինելու մասին.

²³ ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59:

²⁴ ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին օրենք. 1998, հունիսի 26, ՀՕ-15 (2011 ապրիլի 1–ՀՕ-10–Ն օրենքի լրացումներով ու փոփոխություններով):

²⁵ Ս ա ր գ ս յ ա ն. 1996, 70, նաև՝ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 492:

²⁶ ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59:

²⁷ Сборник материалов для описания местностей и племен Кавказа (далее – СМОМПК). 1888, VI, 170.

«1877 թ. Հաղորդում գործում էր մետաքսագործարան, որն ութ ամսվա ընթացքում արտադրում էր 50–60 փուֆ մետաքս»²⁸: Երկու դեպքում էլ բարբառային արտասանությունը նույնը կլիներ՝ Վրթնաշատ: Այն, որ բնականունը վարդաշատ-ը չէ, միանշանակ է: Ո՛չ պատմական տեղեկանքները, ո՛չ բարբառային արտասանությունը չեն հիմնավորում վարդաշատ-ի հետ իմաստային կապը: Ըստ էության, անկախության շրջանի Վարդաշատ-ը հնչողական նմանությամբ վերականգնված, բարբառային հնչատարբերակից գրականացված ձև է՝ զուրկ պատմական հիմքից:

Սա վկայում է, որ ոչ համակարգված լեզվական շեղումները կարող են ժամանակի ընթացքում վերածվել պաշտոնապես ամրագրված, սակայն պատմական հիմքից զուրկ տեղանվանական ձևերի:

Կարծում ենք՝ այդ երևույթի մեկ այլ դրսևորում է անկախության շրջանի տեղանվանացանկում ամրագրված Կարմրակուճը՝ Հաղորդի շրջանում: Եթե քննենք բնականվան պատմական տեղեկանքները, կտեսնենք, որ 1860-ական թվականների փաստաթղթում այն վկայված է Կիմրակիւջ/ը²⁹, 1917 թ.՝ Կեմրակյուճ (Кемра-кюч)³⁰, Կերմակուճ³¹, Կեմրակուճ³², իսկ ավելի ուշ արդեն Կարմրագուճ³³: Վերջինս արդեն իսկ լեզվական փոփոխության հետևանք է՝ ըստ ամենայնի դարձյալ գրականացման (կամ բարբառային հնչատարբերակից, կամ պաշտոնական ռուսերենից) ճանապարհով: Բարբառում և բանահյուսական նմուշներում անունը վկայված է Կիմրակուճ³⁴ ձևով: Անկախության շրջանում այն արդեն Կարմրակուճ ձևով է ամրագրվել: Եթե հայերենով ամրագրված առաջին տարբերակը բարբառային մտածողությամբ քննենք, այն կարող է լինել կիւմէր/գումեր/ +կյուղ/գյուղ/ բաղադրիչների միավորումը, բայց միանշանակ պնդել հնարավոր չէ, որովհետև հաջորդիվ վկայությունները ռուսերենով են, ապա և՛ ռուսերենից տառադարձված: Բայց որ անկախության շրջանի Կարմրակուճ տարբերակը լեզվական աղավաղման հետևանք է և ճշգրիտ ստուգաբանական փորձերն ապակողմնորոշող, դա ակնհայտ է:

Նույն «օրինաչափության» դրսևորում ու նաև պատմական կապի ակնհայտ խզման օրինակներ են Պտրեցիք, Ախեցիք, Իտիլեցիք բնականունների հետագա փոփոխությունները: Այսպես՝ Ասկերանի շրջանի ներկայիս Պատարա բնականունը պատմական աղբյուրներում վկայված է Պտրեցիք անվամբ³⁵ (Ելիզավետպոլի նահանգի Շուշիի գավառում) ու երկրորդային անուն նշված չէ: Ղ. Ալիշանն ասում է, որ գյուղը Պտրեցիք է կոչվել իր մոտ գտնվող լեռան անունից³⁶:

²⁸ СМОМПК. 1888. VI, 174.

²⁹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 492:

³⁰ ՀԱԱ, ֆ. 150, ց. գ. 59:

³¹ Свод статистических данных о населении Закавказского края. 1893, отдел IV.

³² Մ Ե լ թ ու մ յ ա ն. 1990, 270:

³³ Բ ա ռ խ ու լ ա ռ յ ա ն ց. 1996, 101:

³⁴ Արցախի ժողովրդագիտություն. մատենաշար. 2023, հ. 12, 606:

³⁵ Ս ա ռ գ ս յ ա ն. 1996, 66: Տե՛ս նաև Հայաստանի պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 97, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 86:

³⁶ Ա լ ի շ ա ն. 1989, 204:

Իսկ 1917 թ. փաստաթղթում արդեն զուգահեռ իբրև երկրորդային անուն նշվում է Բադարա / Бада-ն³⁷: Հաջորդիվ՝ արդեն խորհրդային շրջանում այն, իբրև պաշտոնական անուն Բադարա ձևով է իրավական վավերացում ստանում: Անկախության շրջանում այն նորից վերանվանվում է, ու այս դեպքում ոչ թե պատմական անունն է վերականգնվում, այլ Բադարա ձևն է հայերենացվում մեքենայորեն: Այդպիսով՝ Պտրեցիք անվան կորստի դեպքում մի կողմից՝ բնականվան կենսագրության կապերի խզում է առաջանում, մյուս կողմից՝ համակարգում տարասեռություն է դրսևորվում: Եթե արցախյան բնականունների անվանացանկը քննենք, ապա կտեսնենք, որ հին բնակավայրերի անուններում – եցիք՝ ցեղ կամ տոհմ նշող ձևային կենսունակ էր, և ցանկում ունեինք արդեն հարացույց՝ Պտրեցիք, Ախեցիք³⁸, Իտիլեցիք³⁹: Վերջին 2-ն էլ են անվանափոխվել. դրանց քննությունը կատարվում է առանձին՝ իբրև անվան հերթափոխություն կամ ժամանակաշրջանի քաղաքական փոփոխությունների հետևանք:

Այսպիսով՝ վերանվանման գործընթացում լեզվական շեղումների վարչաիրավական ինստիտուցիոնալացումը հանգեցնում է տեղանվանական համակարգի ներքին շարունակականության խզման և պատմական շերտերի տրոհման:

5. Պաշտոնական գրության, քարտեզագրության և վարչական հաշվառման անհրաժեշտություն, անվանափոխության եղանակը՝ ուղղագրական ճշգրտում, միօրինակացում և համակարգայնացում:

Վերանվանման պատճառներից են նաև լեզվական ու վարչական ստանդարտացման գործընթացները, երբ տեղանունները հարմարեցվում են պաշտոնական գրության և վարչական հաշվառման պահանջներին: Նման փոփոխությունները կարող են ներառել ուղղագրական ճշգրտումներ, կառուցվածքային հստակեցումներ կամ միօրինակացում:

Այդպիսի օրինակ է ներկայիս Հադրութի շրջանի Առաքել բնականունը, որը պատմական աղբյուրներում⁴⁰ վկայված էր Առաքյուլ: Ենթադրելի է, որ Առաքել ձևը բարբառային տարբերակից փոխադրություն է գրականհայերենյան պաշտոնական տարբերակի: Բայց դա ենթադրություն է՝ հիմնված հնչյունական նմանության իրողության վրա: Ինչո՞ւ: Որովհետև բարբառային արտասանությամբ Առաքելը կլինի թե՛ Առաքել, թե՛ Առաքյուլ: Պաշտոնական ձևը ենթադրում է, որ այն անձնանուն հիմքով բնականուն է ընկալվել, մինչդեռ Արցախի բնականվանացանկում անձնանուններն ինքնին՝ առանց տեղանվանակերտ մասնիկների, բնականուն դառնալու ավանդույթ չունեն: Այդ դեպքում բարբառային տարբերակը պիտի որ ուղղորդող լինի բնակավայրի անվանադրման փաստը բացահայտելու գործում, մինչդեռ վերանվանման հետևանքով բարբառային շերտի քննության դաշտը կարծես թե քողարկվում է:

Այսպիսով՝ պաշտոնական «կայուն» ձևով ամրագրումը հանգեցնում է տեղանվան իմաստի նեղացման կամ վկայված արտասանական տարբերակների դուրս մղման, որի հետևանքով կորսվում են անվան տարբերակներով փոխանցվող պատմական կապերը:

³⁷ ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59:

³⁸ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 492: Տե՛ս Բ ա ռ խ ու դ ա ղ ա ն ց. 1996, 101:

³⁹ ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59: Տե՛ս Բ ա ռ խ ու դ ա ղ ա ն ց. 1996, 101:

⁴⁰ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 492, ֆ. 150, ց. 1, գ. 59:

Այդօրինակ երևույթի արձանագրություն է նաև Մարտակերտի շրջանի Գառնաքար բնականունը. բարբառային հնչատարբերակը Կիռնաքար-ն⁴¹ է, իսկ պատմական աղբյուրներում բնականունը նշվում է Գեառնաքար⁴², Գեռաքար (1667)⁴³, Կռայքար (1745)⁴⁴: Այսօրվա պաշտոնական անվանումը հնարավորություն չի տալիս բացահայտելու դրա ծագումնաբանությունը, և, ըստ էության, ծագումնաբանական կապերը պահպանելը կարևոր չէր անունն արձանագրելիս, կարևորը գրական պաշտոնականով միօրինականացումն էր:

Հիմնականում գրականացումը բարբառային ու գրական տարբերակների ընկալումների հակասություն է առաջացնում և շեղում ստույգ ծագումնաբանությունը պարզելու ճանապարհից, որովհետև գրականացված դեպքերը հիմնականում հնչյունական կազմի մեխանիկական փոխադրությամբ են իրականացվում, և այն դեպքերում էր այդ փոխանցումը «անկորուստ» լինում, եթե բարբառային հնչատարբերակի գրականացումը չէր առաջացնում տարաբովանդակություն. ինչպես՝ Ծակուտին՝ Ծըկոտից, Մաղավուզ՝ Մըղոզից, Քուլատակը՝ Քուլատակից և այլն:

Այս «օրինաչափ փոփոխությունների» դեպքում կարևոր է ընդգծել, որ դրանք վարչական համակարգայնացման պահանջներից բխող գործընթաց են՝ ի տարբերություն գաղափարական կամ քաղաքական վերանվանումների:

6. Պատմական անվան արմատավորվածություն և վարչական փաստաթղթային անվան նկարմամբ լեզվական իներտություն, մեխանիզմը՝ անվանումների զուգակցված (երկշերտ) գործածություն:

Շատ դեպքերում հին և նոր անվանումները երկար ժամանակ գոյակցում են՝ մեկը՝ պաշտոնական, մյուսը՝ բանավոր կամ տեղական գործածության մեջ: Այս զուգակցվածությունը վկայում է, որ վերանվանումը միշտ չէ, որ անմիջապես ընդունվում է հանրային գիտակցության մեջ, և անվան փոփոխությունը իրականում բազմաստիճան գործընթաց է: Տվյալ դեպքում գործ ունենք ոչ միայն «հին-նոր» հակադրության, այլ նաև այդ հակադրության խորքում առկա պատմական-վարչական, տեղական-պաշտոնական, ինքնանվանում-արտաքին անվանում շերտերի փոխազդեցության հետ:

Դրա ամենաակնհայտ օրինակն է Արցախ և Ղարաբաղ տեղանունների զուգակցված գործածությունը⁴⁵: Առաջին գրավոր աղբյուրներում Արծախ/Արցախ վկայությունն է⁴⁶, Ղարաբաղ անունը սկսեց գործածվել XIV դարից⁴⁷, բայց մատենագրության մեջ Արցախը զուգահեռ գործածվում էր⁴⁸: Օտարի տիրապետությունների շրջանում՝ Խամսայի մելիքությունների, Ելիզավետպոլի նահանգում

⁴¹ Դ ա վ թ յ ա ն. 1966, 9:

⁴² Բ ա ռ խ ու դ ա ռ յ ա ն ց. 1996, 101:

⁴³ Օ Ր Բ Ե լ յ ա ն. 1986, 280:

⁴⁴ ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 3, թ. 97, 113:

⁴⁵ Մ ա ռ գ ա ռ յ ա ն. 2020, 349–361:

⁴⁶ Եղիշէի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին. 1958, 94, Փ ա լ ս տ ո ս ի Բ ի լ զ ա ն դ ա ց ո յ. 1912, 314:

⁴⁷ Ուլուբաբյան. 1975, 41, Мырадян. 1990, 76.

⁴⁸ Կ ա դ ա ն կ ա տ վ ա ց ի. 1983, 353:

եղած ժամանակ, խորհրդային տարիներին, Ղարաբաղ տեղանունն էր հիմնականը դարձել, անկախության շրջանում նորից Արցախն է սկսում ակտիվ գործառնվել, թեպետ իբրև պաշտոնական անուն Սահմանադրության մեջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (այսուհետ՝ ԼՂՀ) էր նշված⁴⁹, հետագայում՝ Սահմանադրության փոփոխությամբ նաև Արցախի Հանրապետությունն է զուգահեռ պաշտոնական անուն նշվում⁵⁰: Պայմանավորված պատմաքաղաքական իրողություններով՝ ժամանակ առ ժամանակ դրանցից մեկը դառնում էր հիմնական, մյուսը՝ զուգակցվող՝ հանրային լեզվամտածողության մեջ ամրակայված ու մնացած: Այսօր էլ Արցախն ու Ղարաբաղը շարունակում են մնալ զուգահեռ գործածվող, նույն տարածքը նշող, բայց տարբեր պատմաքաղաքական շերտավորում ունեցող անվանումներ (երբեմն քաղաքական խոսույթում փորձ է արվում հակադրելու երկու անունները՝ հայապատկանությունը կամ օտարապատկանությունը ընդգծելու, բայց այդ հակադրությունը կեղծ է, պատմականորեն չհիմնավորված ու հակագիտական):

Նույն օրինաչափության մեկ այլ դրսևորում ևս քննենք: Արցախի բնականվանացանկում Խաչենի գավառում նշված էր Մեխտի շեն⁵¹ բնակավայրը: Միևտի շեն⁵² / Մեխտի շեն (նաև՝ Մեխտիքենդ երկրորդային անվամբ) պահպանված է նաև արխիվային փաստաթղթերում⁵³: Մեխտի շենի բնակիչները հիմնականում նախկին խոյեցիներ են, որոնք Արցախ են տեղափոխվել 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո, բնակություն հաստատել և գյուղն անվանակոչել Մեխտի շեն: Իհարկե, հնագույն շրջանից այդ տարածքները հայաբնակ էին, և այդ մասին վկայում են ներկայիս գյուղից 2,5 կմ հեռավորության վրա գտնվող դամբարանադաշտն ու սրբատեղիները⁵⁴: Գյուղը նույն անունով է նշված նաև Ելիզավետպոլի նահանգի Շուշիի գավառում⁵⁵: Խորհրդային տարիներին այն Մեխտի շեն անվամբ էր արձանագրվել պաշտոնական բնականվանացանկում: Համաձայն 1962 թ. օգոստոսի 24-ի մարզխորհրդի թիվ 183 որոշման (արձ. թիվ 12), առաջարկվում էր գյուղն անվանակոչել Մեղրավան⁵⁶, բայց այն հանրային ճանաչում չստացավ և չամրակայվեց, ու Մեխտի շեն անունը հիմնական մնաց մինչև 1995 թ.: Անկախության շրջանում Մեխտի շենը վերանվանվեց Լուսաձոր: Թեպետ պաշտոնական բնականվանացանկում այդպես էր նշվում, այնուա-

⁴⁹ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն. 2006, 10. XII. – <https://web.archive.org/web/20220522073526/http://www.nankr.am/hy/1839>.

⁵⁰ Արցախի Հանրապետության Սահմանադրություն. 2017, 20. II. – <https://web.archive.org/web/20220323165812/http://www.nankr.am/hy/1838>.

⁵¹ Բ ա ռ խ ո ղ ա թ յ ա ն ց. 1996, 101:

⁵² ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 492:

⁵³ ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59:

⁵⁴ Բ ա լ ա յ ա ն. 2020, 15:

⁵⁵ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. 1988, 3, 778:

⁵⁶ ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 17:

մենայնիվ, այդ անունը մնաց իբրև փաստաթղթային, և չհանրայնացավ ու չդարձավ իրականում հիմնական: Եթե քարտեզները դիտենք, ապա կտեսնենք թե՛ Մեհտիշենի⁵⁷, թե՛ Լուսաձորի գործածությունը⁵⁸:

Ըստ այդմ՝ անվանումների զուգակցված գործածությունը ցույց է տալիս, որ տեղանվան փոփոխությունը երբեք միակողմանի վարչական գործընթաց չէ: Պաշտոնական անվան ամրագրումը ինքնին դեռևս չի ապահովում դրա հանրային լիարժեք ընդունումը: Տեղանունը, լինելով ոչ միայն աշխարհագրական, այլև պատմական հիշողության և ինքնության կրող, շարունակում է պահպանել իր նախկին ձևը՝ բանավոր և երբեմն նույնիսկ քարտեզագրական գործածության մեջ: Այսպիսով՝ վերանվանումը, լինելով երկարատև, բազմաշերտ գործընթաց, դառնում է նաև տվյալ հասարակության պատմաքաղաքական փորձառության վկայություն:

7. Հասարակական լեզվամրաժողության դիմադրություն կամ պատմական ինքնանվանման կայունություն, մեխանիզմը՝ անվան հերթափոխություն, անվանումների զուգակցված գործածություն (պաշտոնական–ոչ պաշտոնական երկշերտություն):

Արցախի բնականոնների համակարգում նկատվում է նաև անվան հերթափոխության երևույթը, երբ նույն օբյեկտը տարբեր ժամանակաշրջաններում կրել է մի քանի անվանում՝ կախված քաղաքական կարգավիճակից, վարչական պատկանելությունից կամ գաղափարախոսական փոփոխություններից: Այս բազմանունությունը տեղանունը դարձնում է տվյալ ժամանակաշրջանի պատմական վկայություն՝ արձանագրելով իշխանության, ինքնության և տարածքային ընկալման փոփոխությունները:

Իհարկե, այս օրինաչափության տիպական օրինակը Արցախ անվան «հերթափոխությունն» է: Արցախը տարբեր անուններով է կոչվել իր պատմաքաղաքական կյանքի տարբեր շրջաններում. Ադախ, Արցախ, Ծաղեփց աշխարհ, (Ծաղեփ՝ սեպագրերի մեջ ու միջնադարյան հեղինակների երկերում): Խաչեն, Արեւելք, Արեւելից կողմանք, Աղուանից կողմանք, Աղուանք՝ X–XII դդ., Առան էր կոչվել նույն շրջանում և սակավ XIII–XIV դդ., ապա և՛ Ղարաբաղ՝ սկսած XIV դ. վերջից⁵⁹: Չմանրամասնելով յուրաքանչյուր անվան առաջացման պատմական հիմքերը⁶⁰, քննենք Արցախի բնականվանացանկում վկայված այսօրինակ այլ դեպքեր:

Մարգուշանը հիմնադրվել էր 1906 թ. և կոչվել տեղի հողատեր Ավան Յուզբաշովի դստեր՝ Մարգուշայի անունով, արխիվային փաստաթղթում գյուղը չունեի

⁵⁷ Կ ա ր ա պ ե տ յ ա ն. 1995. – <https://raa-am.org/wp-content/uploads/2023/05/%D4%BC%D5%82%D5%80-%D4%B5%D5%8E%D4%B1%D4%B6%D4%B1%D5%8F%D4%B1%D4%B3%D5%90%D5%8E%D4%B1%D4%BE-%D5%87%D5%90%D5%8B%D4%B1%D5%86%D5%86%D4%B5%D5%90.pdf>.

⁵⁸ Nagorno Karabakh Republic, Artsakh (administrative map). – https://ic.pics.livejournal.com/gregorydavidian/15124808/188469/188469_original.jpg.

⁵⁹ Ուլուբայան. 1994, 7:

⁶⁰ Այդ մասին տե՛ս Մ ա ր գ ա ր յ ա ն. 2020, 349–361:

երկրորդային անուն⁶¹ ու մինչև 1952 թ. կոչվել էր այդ անվամբ, ապա և վերանվանվել է Լենինական՝ ի պատիվ հեղափոխական առաջնորդի: Արցախյան առաջին պատերազմում գյուղը թշնամու վերահսկողության տակ անցավ և այդպես մնաց, իսկ պատերազմից հետո ազատագրված մեկ այլ տարածքում հիմնվեց նոր բնակավայր՝ Նոր Մարաղա անվամբ՝ իր հարկի տակ մեկտեղելով բռնագավթված Մարաղայի ու Լենինականի բնակչությանը: Նորմարաղացիներն լենինականցի հիշում է, և միայն խորքային ուսումնասիրությունից հետո նա կարող է հիշել իր երբեմնի մարգուշանցի լինելը: Սա հիշողության ճեղքման տիպական օրինակ է:

Նույն երևույթն է պատմական Դիզակի Ախեցիք⁶² և Իդիլեցիք⁶³ բնակավայրերի անունների դեպքում: Երկու բնակավայրերի մասով էլ նշվում է՝ «բնակիչք՝ բնիկ»⁶⁴: 1917 թ. վերը նշված արխիվային փաստաթղթում այդ բնակավայրերն արդեն ունեն երկրորդային՝ կիսապատճենված անվանում՝ Հախլու // Հախուլու և Իդիլու // Էդիլու: Հետաքրքական է - եցիք մասնիկի փոխարինումը - լու փոխառյալ մասնիկով. սա տեղանունների լեզվական պատկանելության կողմնացույցը շեղելու ամենատարածված միջոցն է, որ նկատելի է Արցախի բնականությունների վերանվանումներում: Խորհրդային տարիներին պաշտոնական բնականվանացանկում դրանք վկայված են այդ անուններով: Անկախության շրջանում վերանվանվում են երկու բնակավայրերը՝ Հախուլու դարձած Ախեցիք՝ Հարթաշեն, Էդիլու դարձած Իդիլեցիք՝ Ուխտաձոր: Իսկ սա արդեն հիշողության խզման տիպական օրինակ է:

Անվան հերթափոխությունը ցույց է տալիս, որ տեղանունը պատմական փաստաթուղթ է. յուրաքանչյուր իշխանություն փորձում է այն դարձնել իր խոսույթի մաս, բայց և փաստ է, որ յուրաքանչյուր նոր անուն չի կարող ջնջել նախորդ շերտը, այլ ստեղծվում է հիշողության բազմաշերտ կառուցվածք:

Այսպիսով՝ անվան հերթափոխությունը ոչ միայն քաղաքական փոփոխությունների հետևանք է, այլև պատմական ժամանակաշերտերի կուտակում, որտեղ յուրաքանչյուր նոր անվանում վերաշարադրում է տարածքի ինքնության ընկալումը, բայց միաժամանակ իր ներսում պահպանում նախորդների հիշողությունը՝ դարձնելով բնականունը իշխանության, լեզվի և պատմության փոխազդեցության կենդանի վկայություն:

Վերանվանման հետևանքները

Արցախի բնականությունների վերանվանումների հետևանքները բազմաբնույթ են և չեն սահմանափակվում լեզվական դաշտով: Ինչպես ցույց է տալիս վերանվանման պատճառների ու ձևերի դասակարգումը, անվան փոփոխությունը միաժամանակ ազդում է սոցիալական ընկալումների, մշակութային հիշողության, քաղաքական խորհրդանշման և քարտեզագրության հստակության վրա: Յուրաքանչյուր վերանվանման ձև իր հետ բերում է որոշակի հետևանքներ, որոնք

⁶¹ ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59, ֆ. 57, ց. 3, գ. 492:

⁶² ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59, Ս ա ր գ ս յ ա ն. 1996, 70:

⁶³ ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59:

⁶⁴ Բ ա ռ խ ու դ ա ռ յ ա ն ց. 1985, 47:

պայմանավորում են տեղանվանական համակարգի ընդհանուր վիճակն ու կայունությունը:

Վերանվանումը առաջին հերթին հանգեցնում է օբյեկտի՝ հասարակության կողմից ընկալման փոփոխության: Այն դեպքերում, երբ տեղանունը փոխում է օբյեկտի ինքնությունը կամ վերաիմաստավորվում է գաղափարական բովանդակությամբ, հանրային գիտակցության մեջ տվյալ վայրը սկսում է ընկալվել ոչ թե իր պատմական կամ բնական բնութագրերի, այլ նոր խորհրդանշական իմաստի միջոցով: Այս երևույթը հատկապես ակնհայտ է այն վերանվանումների դեպքում, երբ անվանումը դառնում է հիշատակի, քաղաքական կամ արժեքային նշան՝ ձևավորելով նոր ինքնության մոդել:

Երկրորդ կարևոր հետևանքը վերաբերում է քարտեզների և պաշտոնական փաստաթղթերի հստակությանը: Լեզվական ստանդարտացման, պաշտոնական գրանցման կամ վարչատարածքային վերաձևումների հետևանքով տեղանունները ամրագրվում են քարտեզներում և փաստաթղթերում նոր ձևով: Սակայն անվան հերթափոխությունը, զուգակցված գործածությունը կամ ոչ համակարգված փոփոխությունները կարող են առաջացնել անորոշություններ՝ նույն օբյեկտի տարբեր անվանումների առկայություն տարբեր աղբյուրներում: Սա դժվարացնում է ոչ միայն գիտական ուսումնասիրությունը, այլև վարչական, իրավական և քարտեզագրական գործառույթները:

Վերանվանման ևս մեկ հետևանք է հնագույն և նոր անունների համատեղ գոյությունը: Ինչպես ցույց է տալիս անվանումների զուգակցված գործածության երևույթը, հին անվանումները հաճախ շարունակում են գործածվել բանավոր խոսքում կամ տեղական միջավայրում, մինչդեռ նոր անունները գործում են պաշտոնական մակարդակում: Այս երկշերտությունը վկայում է, որ վերանվանումը երկարատև գործընթաց է և չի ավարտվում անվան իրավական ամրագրմամբ. իրականում այն ավարտվում է միայն այն ժամանակ, երբ հասարակական գիտակցությունն ընդունում կամ մերժում է նոր անվանումը:

Վերանվանումները զգալի ազդեցություն են ունենում հասարակական և մշակութային հիշողության վրա: Բառապատճենման, վերաիմաստավորման կամ դիպվածային անվանափոխությունների դեպքում կարող է խաթարվել անվան և պատմական իրականության կապը՝ առաջացնելով հիշողության շերտերի տեղաշարժ կամ մոռացում: Մինչնայն ժամանակ, պատմական անվանումների վերականգնումը կարող է հակառակ ազդեցություն ունենալ՝ նպաստելով հիշողության վերակենդանացմանը և տարածքի պատմական ինքնության վերարժևորմանը:

Այսպիսով՝ վերանվանման հետևանքները համապարփակ են և բազմադրոշմային: Դրանք ձևավորում են ոչ միայն լեզվական իրականությունը, այլև հասարակության տարածքային ինքնագիտակցությունը, մշակութային հիշողությունը, քաղաքական խորհրդանշումը և քարտեզագրական համակարգի հստակությունը: Վերանվանումը պետք է դիտարկվի որպես սոցիալ-մշակութային գործընթաց, որի ազդեցությունը տարածվում է անվան սահմաններից դուրս՝ ընդգրկելով ամբողջ տեղանվանական համակարգի կառուցվածքը:

Եզրակացություն

Արցախի բնականումների վերանվանումների քննությունը ցույց է տալիս, որ անվանափոխությունը երբեք ապաքաղաքական գործընթաց չէ. այն ձևավորվում է պատմական իրադարձությունների, քաղաքական նպատակադրումների, մշակութային վերաբժանման և լեզվական փոփոխությունների փոխազդեցության հետևանքով: Տարբեր փուլերում այդ գործոնների կշիռը փոխվել է, սակայն վերանվանումը մշտապես գործել է որպես ինքնության և տարածքային պատկանելության խորհրդանշական ձևակերպման, երբեմն էլ՝ քաղաքական միջամտության գործիք:

Այս համատեքստում վերանվանումը պետք է դիտարկել ոչ միայն որպես բառի ձևի փոփոխություն, այլև որպես միջամտություն օբյեկտի ինքնությանը և հանրային ընկալման կառուցվածքին: Տեղանունը կրում է պատմական հիշողություն, ուստի անվան փոփոխությամբ վերաշարադրվում է նաև այն պատկերացումը, որով տարածքը ներկայանում է հանրային գիտակցության մեջ՝ անկախ նրանից, շարժառիթը եղել է վարչական, գաղափարական, թե՛ լեզվական:

Այսպիսով՝ տեղանվանական փոփոխությունները դառնում են հերթափոխվող ժամանակաշրջանների «լեզվական հետքը»՝ քաղաքական ու հասարակական շրջադարձերին արձանագրող, տարածքի խորհրդանշական պատկերն ու պատմական հիշողության կառուցվածքը ձևավորող:

Լուսինե Մարգարյան – ք. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայոց լեզվի բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Նախաբառի բարբառ և բանահյուսություն, Արցախի տեղանվանագիտություն: Հեղինակ է 2 մենագրության և 31 հոդվածի:

ORCID:0009-0005-0028-8600. margaryan.lusine@yandex.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղ. 1989, Արցախ. – «Բազմավեպ» (Վենետիկ), № 1-4, 220 էջ [Alishan Gh. 1989, Artsakh. – “Bazmavep” (Venice), № 1–4, 220 p. (in Armenian)]:

Արցախի Հանրապետության Սահմանադրություն. 2017, փետրվարի 20 <https://web.archive.org/web/20220323165812/http://www.nankr.am/hy/1838> [Constitution of the Republic of Artsakh. 2017, February 20. <https://web.archive.org/web/20220323165812/http://www.nankr.am/hy/1838> (in Armenian)]:

Արցախի ժողովրդագիտություն. մատենաշար. 2023, հ. 12, Երևան, «Արմավ» հրատ., 784 էջ [Demography of Artsakh. Series, 2023, V. 12. Yerevan, “Arnav” Publishing House, 784 p. (in Armenian)]:

Բալայան Վ. 2020, Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր, Երևան, «Չանգակ» հրատ., 2020, 748 էջ [Balayan V. 2020, Outlines of the History of Settlements of the Republic of Artsakh. Yerevan, “Zangak” Publishing House, 2020, 748 p. (in Armenian)]:

Բարխուդարյանց Մ. Եպս. 1985, Արցախ, Բագու, «Արոր» տպ., 462 էջ [Barkhudaryants M. Bishop. 1985, Artsakh. Baku, “Aror” Printing House, 462 p. (in Armenian)]:

Բարխուդարյանց Մ. Եպս. 1996, Արցախ, Երևան, «Ամարաս» հրատ., 303 էջ [Barkhudaryants M. Bishop. 1996, Artsakh. Yerevan, “Amaras” Publishing House, 303 p. (in Armenian)]:

Բեգլարյան Հ. 2005, Արցախ-Նամե, ԼՂՀ Գրողների միություն, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 648 էջ [Beglaryan H. 2005, Artsakh-Nameh, NKR Writers' Union. Stepanakert “Vachagan Barepasht” Publishing House, 648 p. (in Armenian)]:

Դավթյան Կ. 1966, Լեռնային Ղարաբաղի բարբառի բարբառային քարտեզ. 1966, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 508 էջ [Davtyan K. 1966, Dialectal map of the Nagorno-Karabakh dialect. Yerevan, Armenian SSR, Publishing House of the National Academy of Sciences, 508 p. (in Armenian)]:

Եղիշէի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան. 1958, Երևան, «Հայպետհրատ», 158 էջ [Yeghishe's account of Vardan and the Armenian war, illuminated by the manuscript work of E. Der-Minasyan. Yerevan, 1958, “Haypethrat”, 158 p. (in Armenian)]:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ. ֆ. 1, ց. 1, գ. 17 [State Archives of the Nagorno-Karabakh Republic. F. 1, L. 1, C. 17 (in Armenian)]:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն. 2006, դեկտեմբերի 10 [Constitution of the Nagorno-Karabakh Republic. 2006, December 10 <https://web.archive.org/web/20220522073526/http://www.nankr.am/hy/1839> (in Armenian)]:

ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին օրենք, 1998, հունիսի 26, ՀՕ-15 (2011 ապրիլի 1-ՀՕ-10-Ն օրենքի լրացումներով ու փոփոխություններով) [Law on the Administrative-Territorial Division of the Nagorno-Karabakh Republic, 1998, June 26, HO-15 (with amendments and additions to the law of April 1, 2011-HO-10-N) (in Armenian)]:

Հայաստանի ազգային արխիվ. ֆ. 50, ց. 1, գ. 3, թ. 97, 113, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 47, ֆ. 57, ց. 1, գ. 492, ֆ. 150, ց. 1, գ. 59 [National Archives of Armenia. F. 50, L. 1, C. 3, P. 97, 113, F. 56, L. 1, C. 305, P. 47, F. 57, L. 3, C. 492, F. 150, C. 1, C. 59 (in Armenian)]:

Հայաստանի պատմության պետական կենտրոնական արխիվ. ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 86, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 97 [State Central Archive of History of Armenia, F. 56, L. 1, C. 2914, P. 86; F. 57, L. 1, C. 3, P. 97 (in Armenian)]:

Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. 1986, Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հակոբյան Թ., հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 990 էջ [Dictionary of Place Names of Armenia and Adjacent Regions. 1986, Melik Bakhshyan St., Barseghyan H., Hakobyan T., V. 2. Yerevan, YSU Publishing House, 990 p. (in Armenian)]:

Խաչատրյան Հ. 1988, Տարիքը տասնհինգ դար. – «Գրական թերթ», 02. IX. 1988 [Khachatryan H. 1988, The Era of Fifteen Centuries. – “Grakan tert”, 02. IX. 1988 (in Armenian)]:

Խաչատրյան Վ. 2015, Հայաստանի տեղանունները հայ պատմիչների երկերում, Երևան, «Նաիրի» հրատ., 182 էջ [Khachatryan V. 2015, Toponyms of Armenia in the Works of Armenian Historians. Yerevan, “Nairi” Publishing House, 182 p. (in Armenian)]:

Կաղանկատվացի Մ. 1983, Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 412 էջ [Kaghankatvatsi M. 1983, History of Agwan World. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of ASSR, 412 p. (in Armenian)]:

Կարապետյան Ս. 1995, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և ազատագրված շրջաններ, քարտեզ, Երևան [Karapetyan S. 1995, Republic of Nagorno-Karabakh and Liberated Regions, map. Yerevan. – <https://raa-am.org/wp-content/uploads/2023/5/%D4%BC%D5%82%D5%80-%D4%B5%D5%8E%D4%B1%D4%B6%D4%B1%D5%8F%D4%B1%D4%B3%D5%90%D5%8E%D4%B1%D4%BE%D5%87%D5%90%D5%8B%D4%B1%D5%86%D5%86%D4%B5%D5%90.pdf> (in Armenian)]:

Մարգարյան Լ. 2020, «Արցախ» և «Ղարաբաղ» տեղանունների ստուգաբանության հարցի շուրջ. – «Բանբեր Մատենադարանի», № 29, էջ 349–361 [Margaryan L. 2020, On the Etymology of the Toponyms “Artsakh” and “Karabakh”. – “Banber Matenadaran”, № 29, pp. 349–361 (in Armenian)]:

Մելքումյան Ս. 1990, Լեռնային Ղարաբաղ, Երևան, «Լույս» հրատ., 303 էջ [Melkumyan S. 1990, Nagorno-Karabakh. Yerevan, “Luys” Publishing House, 303 p. (in Armenian)]:

Մովսես Խորենացի. 1913, Պատմություն Հայոց, Տիֆլիս, Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, 428 էջ [Movses Khorenatsi. 1913, History of the Armenians. Tiflis, “Aragatip” Publishing House of Mnacakan Martiroseanc, 428 p. (in Armenian)]:

Սարգսյան Սլ. 1996, Արցախ. պատմաշխարհագրական ճշգրտումներ, Երևան, «Հայ Էդիթ» հրատ., 92 էջ [Sargsyan Sl. 1996, Artsakh. Historical and Geographical Clarifications. Yerevan, “Hay Edit” Publishing House, 92 p. (in Armenian)]:

Սլուբաբյան Բ. 1975, Խաչենի իշխանությունը X–XVI դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 454 էջ [Slubabyan B. 1975, Khachenian Principality X–XVI Centuries. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of ASSR, 454 p. (in Armenian)]:

Սլուբաբյան Բ. 1994, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, «Վարանդեան» հրատ., 386 էջ [Slubabyan B. 1994, Artsakh History from the Beginning to Our Days. Yerevan, “Varandean” Publishing House, 386 p. (in Armenian)]:

Փավստոս Բիզանդացու Պատմություն Հայոց. 1912, Թիֆլիս, Էլեկտրատիպ. Օր. Ն. Աղանեսանի, 408 էջ [History of the Armenians by Pavstos Byuzandatsy. 1912. Tiflis, “Elektratip” Publishing House of Miss N. Aghanean, 408 p. (in Armenian)]:

Օրբելյան Ստեփանոս. 1986, Սյունիքի պատմություն, Երևան, «Սովետական Գրող» հրատ., 614 էջ [Orbelyan Stepanos. 1986, History of Syunik. Yerevan, “Sovetkan Grogh” Publishing House, 614 p. (in Armenian)]:

Мурадян П. 1990, История-память поколений. Ереван, изд. «Айастан», 160 с. [Muradyan P. 1990, History-memory of Generations. Yerevan, 160 p. (in Russian)]:

Свод статистических данных о населении Закавказского края. 1893. Тифлис, отдел IV [Collection of statistical data on the population of the Transcaucasian region. 1893. Tiflis, department IV].

Сборник материалов для описания мѣстностей и племень Кавказа. 1888, Выпуск 6. Тифлис, с. 463 [Collection of materials for describing the localities and tribes of the Caucasus. 1888, Issue 6. Tiflis, p. 463].

Nagorno Karabakh Republic, Artsakgh (administrative map). – https://ic.pics.livejournal.com/gregorydavidian/15124808/188469/188469_original.jpg.

ПРОЦЕСС ПЕРЕИМЕНОВАНИЯ В ТОПОНИМИЧЕСКОЙ СИСТЕМЕ АРЦАХА:
ОСНОВАНИЯ, ПРИЧИНЫ И ПОСЛЕДСТВИЯ

ЛУСИНЭ МАРКАРЯН

Резюме

Ключевые слова: Арцах, топоним, ойконим, переименование, топонимическая система, историческая память, административно-территориальное преобразование, социально-экономические отношения, языковая стандартизация, идентичность, картография.

Переименование ойконимов в топонимической системе Арцаха представляет собой многоуровневый процесс, формирующийся во взаимодействии исторических, лингвистических, культурных и политических факторов. В результате переименования подвергается изменению содержание ойконима, восприятие его исторической биографии, а также его символическая значимость в общественном сознании.

В основе переименований лежат административно-территориальные преобразования, социально-экономические отношения и отражающие их идеологические изменения, языковые контакты, а также потребности письменной фиксации и картографирования. В разные исторические периоды перевод, фонетическая трансформация, калькирование, переосмысление, транслитерация, литературная нормализация и стандартизация становились способами изменения ойконимов.

Примеры Дрнаварт / Кармир гюх, Степанакерт, Шаумян, Амарас, Хачен, Вардашат, Кармракуч, Патара, Аракел, Гарнакар, Мехтишен / Лусадзор и ряд других свидетельствуют о том, что переименование нередко приводит к перекодированию исторической памяти территории, в одних случаях восстанавливая, а в других – разрывая связь между названием и реальной историко-географической средой.

Следствием этого процесса становятся параллельное употребление старых и новых названий, картографическая и документальная неоднородность, фрагментация пространственной биографии, а также формирование новых символических пластов идентичности.

Изменения ойконимов Арцаха являются отражением политических, культурных и лингвистических реалий разных исторических эпох и важным свидетельством реконфигурации исторической памяти и идентичности территории.

Лусинэ Маркарян – к. филол. н., доцент, младший научный сотрудник отдела современного армянского языка Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: Карабахский диалект и фольклор, топонимика Арцаха. Автор 2 монографий и 31 статьи. ORCID: 0009-0005-0028-8600. margaryan.lusine@yandex.com

THE PROCESS OF RENAMING IN THE TOPONYMIC SYSTEM OF ARTSAKH:
FOUNDATIONS, CAUSES, AND CONSEQUENCES

LUSINE MARGARYAN

Summary

Keywords: Artsakh, place name, oikonym, renaming, toponymic system, historical memory, administrative-territorial restructuring, socio-economic relations, language standardization, identity, cartography.

The renaming of oikonyms in the toponymic system of Artsakh is a multilayered process shaped by the interaction of historical, linguistic, cultural, and political factors. The renaming causes changes to the semantic content of an oikonym, the perception of its historical biography, and its symbolic value in public consciousness.

The renaming is grounded on administrative-territorial restructuring, socio-economic relations and the ideological changes that reflect them, linguistic contacts, as well as requirements of written documentation and cartographic representation. In different historical periods, translation, phonetic transformation, calquing, reinterpretation, transliteration, literary normalization and standardization have served as mechanisms of oikonymic changes.

The examples of Drnavarz/Karmir Gyugh, Stepanakert, Shahumyan, Amaras, Khachen, Vardashat, Karmrakuch, Patara, Arakel, Garnakar, Mehtishen/Lusadzor, and others show that renaming often recodes the historical memory of a territory, in some cases restoring, and in others disrupting, the connection between the name and the actual historical-geographical environment.

This process leads to the parallel use of old and new names, cartographic and documentary heterogeneity, fragmentation of spatial biography, and formation of new symbolic layers of identity.

The changes in the oikonyms of Artsakh reflect the political, cultural, and linguistic realities of different historical periods and serve as important evidence of the reconfiguration of the territory's historical memory and identity.

Lusine Margaryan – Candidate of Philological Sciences, Associate Professor, Junior Researcher at the Department of Modern Armenian Language of the Institute of Language after Hr. Acharyan, National Academy of Sciences of the Republic of Armenia. Scientific interests: Karabakh dialect and folklore, toponymy of Artsakh. Author of 2 monographs and 31 articles. ORCID: 0009-0005-0028-8600. margaryan.lusine@yandex.com